ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն բանաստեղծ, պետական, հասարակական գործիչ Հրաչյա Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ. 59 /3-րդ մուտք/ հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրաչյա Հովհաննիսյանը ծնվել է 1919թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ Շահաբ գյուղում (այժմ՝ Մայակովսկի): 1941թ. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսից մեկնել է սովետական բանակ, մասնակցել Երկրորդ համաշխարհային պատերազմին: 1955-1959թթ. և 1978-1982թթ. եղել է «Գրական թերթ»-ի գլխավոր խմբագիրը, 1959-1975թթ.՝ Հայաստանի գրողների միության վարչության երկրորդ քարտուղարը, 1982-1986թթ.՝ «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիրը, 1988-1990թթ.՝ ՀԳՄ վարչության նախագահը: Նրա բանաստեղծությունների առաջին գիրքը («Իմ կյանքի երգը») լույս է տեսել 1948թ.: Այնուհետև հրատարակվել են նրա «Երկրորդ հանդիպում» (1951թ.), «Հրաշալի այգեպան» (1956թ.), «Ծովի լռությունը» (1964թ.), «Վայրի վարդ» (1968թ.), «Սուրը դափնու վրա» (1970թ.), «Հայրական երգ» (1977թ.), «Իրիկնային ղողանջ» (1982թ.), «Դաժան դրախտավայր» (1993թ.), «Մենության օրեր» (1996թ.) ժողովածուները: Եղել է քնարական բանաստեղծ:

Թարգմանել է մի շարք բանաստեղծների, ինչպես նաև Ա. Պուշկինի, Ն. Նեկրասովի, Ի. Ֆրանկոյի, Լ. Արագոնի, Մ. Ռիլսկու ստեղծագործություններից: Ստեղծագործության մեջ առանձին տեղ է գրավում գեղարվեստական եռագրությունը («Ոսկե ամպ», 1984թ., «Պատերազմի դեմքը», 1986թ., «Կապույտ լեռան շուքը», 1995թ.): Գրողի երկերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Ժողովուրդների բարեկամության և «Պատվո նշան» շքանշաններով: 1974թ. արժանացել է Հայաստանի մշակույթի վաստակավոր գործչի կոչման, 1979թ.՝ ՀՀ Պետական մրցանակի, 1982թ.՝ ՀԳՄ Ավետիք Իսահակյանի անվան մրցանակի, 1994թ.՝ Արցախի Եղիշեի անվան պետական մրցանակի:

Հրաչյա Հովհաննիսյանը մահացել է 1997թ. Երևանում:

Բանաստեղծ, պետական, հասարակական գործիչ Հրաչյա Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ. 59 /3-րդ մուտք/ հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կ. Վարդանյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հրաչյա Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հրաչյա Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ